Հ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Անդրկովկասի բանվոր դասակարգը և բոլշևիկյան կազմակերպությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914—1917 թթ. փետրվար), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1977, 322 էջ։

Գրախոսվող աշխատությունը նվիրված է Համառուսաստանյան հերոսական պրոլետարիատի չոկատներից մեկի՝ Անդրկովկասի բանվոր դասակարգի և երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների 1914—1917 թթ. պատմության համակողմանի և քննական լուսաբանմանը։ Հեղինակն իր աշխատության համար բնաբան է ընտրել Ֆ. Էնգելսի այն հայտնի միտքը, թե «բանվոր դասակարգի դրությունը ժամանակակից բոլոր սոցիալական շարժումների իրական հիմքն ու ելակետն է, որովհետև այն ներկայացնում է մեր արդի սոցիալական աղետների ամենասուր և անողոք արտահայտությունը»[1]։

Եվ բանվոր դասակարգի դրության ուսումնասիրությունը հեղինակի համար իրոք ելակետ է հանդիսացել լուսաբանելու հեղափոխական շարժումներն ու բոլշևիկյան կուսակցության դերը որպես պրոլետարիատի մարտական պայքարի կազմակերպչի։ Ըստ այդմ էլ աշխատությունն արծարծում է երկու թեմա, հարցերի երկու մեծ խումբ։ Գրքի առաջին երկու գլուխները նվիրված են Անդրկովկասի տնտեսական կացության և բանվոր դասակարգի կազմի դինամիկայի, նրա դրության քննարկմանն ու վերլուծմանը։ Աշխատության հաջորդ գլուխները լուսաբանում են բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Սակայն հեղինակը նշված հարցերով չի սահմանափակվում։ Համառուսաստանյան իրադարձությունների ֆոնի վրա նա տալիս է երկրամասի սոցիալ-քաղաքական պատկերը, վերլուծում ցարիզմի ծայրերկրային քաղաքականության, տիրապետող դասակարգերի փոխհարաբերության, նրանց ունեցած ազդեցության ու տեսակարար կշռի, պատերազմի տարիներին անդրկովկասյան ազգայնական կուսակցությունների դիրքորոշման, կովկասյան ռազմաճակատին զինամթերք մատակարարելու և այլ հարցեր, որոնք սերտորեն առնչվում են շոշափված խնդիրների հետ։

Ակնարկեցինք, որ աշխատության առաջին և երկրորդ գլուխներում հետազոտվում են երկրամասի տնտեսությունը և լայն առումով բանվոր դասակարգի դրությունը 1914—1917 թթ.։ Առանց վարանման պետք է փաստարկել, որ սովետական պատմագիտության մեջ դա առաջին լուրջ փորձն է՝ ամբողջացնելու երկրամասի պատմության այդ երկու կարևոր, արդիական պրոբլեմները։ Գիտական առումով միանգամայն ճիշտ է նաև այն, որ այդ հարցերը քննարկելիս հեղինակը Անդրկովկասը չի մասնատել առանձին վարչական միավորների, այլ հարցերը լուսաբանել է ամբողջ երկրամասի տնտեսական զարգացման ու վիճակի տեսանկյունից։

Հ. Պետրոսյանը բանվոր դասակարգի դրությունը և բոլշևիկների գործունեությունը լուսաբանել է ոչ միայն գիտական շրջանառության մեջ առկա փաստաթղթերի, այլև արխիվային նորահայտ վավերագրերի հիման վրա. վավերագրերը քննարկելիս նա ցուցաբերել է նոր մոտեցում և նոր խոսք ասել ուսումնասիրվող հարցերի շուրջը։ Մենագրության գլխավոր արժանիքը հեղինակի հաջող փորձն է՝ ողջ Անդրկովկասի տնտեսական կյանքի հենքի վրա տալ երկրամասի բանվոր դասակարգի դրության և բոլշևիկյան կազմակերպությունների ամբողջական պատմությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։

Գիտահետազոտական լուրջ աշխատանքի արդյունք է Անդրկովկասի տնտեսական նկարագրությանը նվիրված առաջին գլուխը, որտեղ ընդգրկված փաստական հարուստ նյութերին ուղեկցում են հեղինակի հիմնավոր ու պատճառաբանված հետևությունները։ Գրքում ցույց է տրված, որ XX դ. երկրորդ տասնամյակին ևս ինչպես ողջ Ռուսաստանը, այնպես էլ Անդրը-

---

1 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Անգլիայի մասին, Երևան, 1953, էջ 3։

կովկասը շարունակում էր մնալ հետամնաց ագրարային երկիր։ Արդյունաբերությունն Անդրկովկասում ավելի թույլ էր զարգացած, իսկ գյուղատնտեսությունը կաշկանդված էր կիսաֆեոդատիրական հարաբերությունների բազմաթիվ մնացորդներով։ Հեղինակը ցույց է տվել, որ թեև արդյունաբերության զարգացման համար Անդրկովկասը լայն հեռանկարներ ու հնարավորություններ ուներ, սակայն ցարիզմն ամեն կերպ խոչընդոտում էր երկրամասի համակողմանի դարգացումը, ձգտելով ռուսական արդյունաբերական կապիտալի համար այն պահել սոսկ հումքի էժան աղբյուր և վաճառահանման շուկա։ Դրան զուգընթաց, գրքում հիմնավորված է այն թեզը, թե Անդրկովկասի արտադրողական ուժերի զարգացումը ցարիզմն արգելակում էր նաև քաղաքական նկատառումներով. Անդրկովկասը Ռուսական կայսրության այն ծայրամասերից էր, որտեղ ցարիզմն իրականացնում էր իր նվաճողական քաղաքականությունը դեպի Իրան, Թուրքիա և այլ երկրներ, իսկ այդ քաղաքականությունը կենսագործելու համար բազմաթիվ այլ պայմանների հետ նրան անհրաժեշտ էր այդ երկրները ևս պահել տնտեսական ու քաղաքական հետամնացության մեջ։ Մինչդեռ Անդրկովկասի արդյունաբերական զարգացումը ոչ միայն բարերար ազդեցություն կունենար հարևան երկրների տնտեսական առաջընթացի վրա, այլև կուժեղացներ երկրամասի աշխատավորների ազգային-ազատագրական շարժումը և մասնավորապես նրանց առաջավոր շոկատի ու ղեկավարի՝ բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը, որը, անշուշտ. կարգելակեր ցարիզմի նվաճողական պլանների իրականացումը։ Վերը նշված մաքերի, հետևություններ, ինչպես նաև դրանց աղերսվող շատ ու շատ հարցերի հիմնավորումը կատարված է փաստական նյութի համադրական քննությամբ։

Տալով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսաստանի և Անդրկովկասի տնտեսության նկարագիրը, հեղինակը նշում է, որ ցարիզմը չկարողանալով ռազմական պահանջներին համապատասխան վերակառուցել երկրի տնտեսությունը, մասնավորապես արդյունաբերությունը, փորձեր էր անում ստանալ բուրժուազիայի աջակցությունը, իսկ վերջինս էլ օգտվելով առիթից, դրսևորում էր իշխանությանը մասնակցելու հավակնություններ։ Ինչպես դրրի բոլոր հատվածներում, այստեղ ևս իր ասածը հիմնավորելու համար հեղինակը դիմում է փաստերի և իրադարձությունների վկայակոչմանը։

Գրքում ցույց է տրված, որ հանդիսանալով ռուսական բուրժուազիայի շոկատներից մեկը, անդրկովկասյան բուրժուազիան ևս տեղում ձեռնամուխ եղավ ռազմարդյունաբերական կոմիտեների ստեղծմանը։

Աշխատության մեջ հանգամանալից լուսաբանված է Անդրկովկասի պրոլետարիատի իբալաղուրկ կացությունը և տնտեսական անտանելի դրությունը (գլուխ երկրորդ)։ Այս պրոբլեմը համարելով իր ուսումնասիրության առաջնահերթ խնդիրներից մեկը, Հ. Պետրոսյանը նրա հետազոտությունը վարել է փաստական հարուստ նյութի լայն օգտագործմամբ, այդ նյութի վերլուծական քննությամբ։ Պրոբլեմի քննարկումը զբաղեցրել է պատկառելի մի բաժին (էջ 61—140)։ Նա նշում է, որ Ռուսաստանում, որտեղ կապիտալիստական շահագործումը զուգակցվում էր ճորտատիրական հարաբերությունների բազմաթիվ մնացորդների հետ, բանվոր դասակարգի դրությունն ավելի ծանր էր, քան կապիտալիստական որևէ այլ երկրում։ Պատերազմի տարիներին բանվորների դրությունն ավելի վատթարացավ։ 1915 թ. սեպտեմբերին օրենք ընդունվեց, որով վերացվեցին կանանց ու երեխաների աշխատանքի օգտագործման բոլոր սահմանափակումները։ Բանվորների աշխատանքային պայմաններն ավելի ծանրացան։ Սակայն էին հատկապես նավթարդյունաբերության, պղնձի ու մանգանի հանույթի վրա աշխատող բանվորների պայմանները։

Քննարկվող աշխատության ուշագրավ կողմերից մեկը հեղինակի հաջող փորձն է՝ տալու բանվոր դասակարգի թվական աճի դինամիկան, բնակչության կազմում նրա ունեցած տեսակարար կշռի, ազգային, տարիքային, սեռական և որակական կազմի պատկերը։ Ընդհանրապես Անդրկովկասի տարածքի, բնակչության, վարչական կառուցվածքի, ազգային կազմի. տնտեսության, արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների քանակի վերաբերյալ հեղինակը արխիվային, վիճակագրական, մամուլի և գրականության նյութերի համադրումով կազմել է մեկ տասնյակից ավելի շատ կարևոր աղյուսակներ (էջ 11, 47, 66, 67, 70, 77, 79, 80, 82, 85, 87, 120 և այլն), որոնք ճշգրտված և իրական պատկերացում են տալիս երկրամասի սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ։ Հեղինակի կազմած այդ ուշագրավ աղյուսակների կարևորությունը չի սահմանափակվում միայն գրախոսվող աշխատության մեջ արծարծված հարցերի աղերսով. չենք կարող չնշել, որ այդ աղյուսակների հարկավորությունը կզգան նաև ապագա այն հետազոտողները, որոնք ուսումնասիրելու են երկրամասի այդ շրջանի պատմության և տնտեսության խնդիրները։

Անդրկովկասի բոլշևիկների գործունեության լուսաբանությունը տալիս հեղինակը միանգամայն հիշտ է վարվել՝ հասարակության անդրադառնալով համաշխարհային պատերազմը սկսելու կապակցությամբ Երկրորդ ինտերնացիոնալի կուսակցությունների և նրանց առաջնորդների հնչող մեծամասնության դավաճանական վարքագծին։ Այդ «շեղումը» կարևոր է, որովհետև, ինչպես ցույց է տրված մենագրության մեջ, նույն քաղաքականությունը Ռուսաստանում որդեգրեցին մենշևիկներն ու էսէռները։ Ավելի բացահայտ դավաճանական դիրք բռնեցին կովկասյան մենշևիկների պարագլուխներ Ն. Ժորդանիան, Կ. Հախիձեն և մյուսները։

Պետական դումայի մենշևիկյան ֆրակցիան մամուլի և տեղական կազմակերպությունների միջոցով անում էր ամեն ինչ, որպեսզի օգնի բուրժուազիային՝ մթագնելու պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը, շեղելու նրան հեղափոխական պայքարից, և ռազմաարդյունաբերական կոմիտեներին կից «բանվորական խմբեր» ստեղծելով՝ Ռուսաստանի բանվոր դասակարգին դարձնի իմպերիալիստական պատերազմի ակտիվ մասնակից։

Կովկասյան մենշևիկները, որոնք ընթանում էին ռուսական մենշևիզմի ամենաաջ թևում, անսքող կերպով պայքար ծավալեցին բոլշևիկների անլեգալ գործունեության դեմ։ Խոչընդոտում էին ցարական ինքնակալության դեմ բոլշևիկյան կոչերի ու թռուցիկների տարածումը։ Սրանք հարցեր են, որոնց քննարկումը կատարելով փաստական անառարկելի հիմքի վրա, հեղինակը մերկացրել է մենշևիկների «հեղափոխականությունը» և ցույց տվել նրանց դավաճանությունը բանվոր դասակարգի պայքարին։

Գրքում միաժամանակ ցույց է տրված, որ Վ. Ի. Լենինը Շվեյցարիայում, տարագրության մեջ, հսկայական աշխատանք էր տանում սոցիալ-շովինիզմը մերկացնելու ուղղությամբ և ուշի-ուշով հետևում էր Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին։ Բուրժուակալվածատիրական հայրենիքի պաշտպանության էսէռամենշևիկյան լոզունգի փոխարեն բոլշևիկների կուսակցությունն առաջադրեց պատերազմում ցարական կառավարության պարտության լոզունգը։ «Հայրենիքի պաշտպանության» շովինիստական մթնոլորտում բոլշևիկների աշխատանքի պայմաններն անտանելի էին դառնում։ Ցարական կառավարությունը, ինչպես նշված է գրախոսվող աշխատության մեջ, դեռևս պատերազմից առաջ դատաստան էր տեսել Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպության մի շարք ղեկավարների հետ։ Բանտարկվել և Սիբիր էին աքսորվել Ս. Օրջոնիկիձեն, Ս. Սպանդարյանը, Ե. Ստասովան, Ս. Կասյանը և ուրիշներ։ Ջնայած դրան, Անդրկովկասի բոլշևիկները Ս. Շահումյանի, Պ. Ջավարիձեի, Մ. Ազիզբեկովի գլխավորությամբ շարունակեցին իրենց հեղափոխական պայքարը։ Նրանք Ս. Շահումյանի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան նաև երկրամասի այլ քաղաքների ու շրջանների կուսակցական կազմակերպությունների վերականգնմանը։ Հեղինակի շարադրանքում նշանակալից տեղ է տրված այն իրողությունների և հնարավորությունների լուսաբանմանը, որոնք օգտագործում էին բոլշևիկները՝ երկրամասի կուսակցական կազմակերպությունների գործունեության և հեղափոխական աշխատանքի վերականգնման համար։ Աշխատավորների շրջանում հեղափոխական աշխատանք ծավալելու համար Անդրկովկասի բոլշևիկները օգտագործեցին նաև քաղաքային դումաների ընտրական կամպանիան և այդ դումաների ամբիոնները։ Նշելով այդ, հեղինակը ցույց է տվել, որ բոլշևիկները օգտագործեցին նաև պատերազմի տարիներին Ռուսաստանում լայն թափ ստացած կոոպերատիվ շարժումը։ Անդրկովկասի բոլշևիկները մտան սպառողական կոոպերատիվների մեջ և դրանց ժողովներում, դասախոսություններում բացատրում էին երկրում հետզհետե խորացող ճգնաժամի պատճառները, մասնանշում պատերազմից դուրս գալու իսկական ելքը։

Հ. Պետրոսյանը պատշաճ ուշադրություն է դարձրել բոլշևիկների պայքարին՝ ուղղված բանվորական շարժումն այլասերելու բուրժուազիայի ու սոցիալ-շովինիստների բոլոր տեսակի փորձերի դեմ։ Նա նշել է, որ այդ պայքարն առաջին հերթին արտահայտվեց ռազմաարդյունաբերական կոմիտեների ակտիվ բոյկոտի լենինյան տակտիկայի կենսագործման մեջ։ Ռազմաարդյունաբերական կոմիտեներին կից «բանվորական խմբերի» ստեղծումը բուրժուազիայի կողմից մի փորձ էր, բանվորներին ներգրավելով «հայրենիքի պաշտպանության» գործի մեջ, իմպերիալիստական պատերազմը ներկայացնել որպես «համաժողովրդական պատերազմ», խաղաղացնել, իրեն ենթարկել հետզհետե աճող բանվորական շարժումը և էլ ավելի ուժեղացնել բանվոր դասակարգի շահագործումը։ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների 1915 թ. հոկտեմբերյան խորհրդակցությունը վճռականորեն դատապարտեց բանվորների մասնակցությունը ռազմաարդյունաբերական կոմիտեներին։

Գրքում մերկացված է այն նպատակը, որ հետապնդում էին մենշևիկներն ու էսէռները, մտնելով ռազմաարդյունաբերական կոմիտեների մեջ. նրանք ձգտում էին ինչ գնով էլ լինի համաձայնության գալ բուրժուազիայի հետ և բանվոր դասակարգի պայքարն ուղղել բուրժուազիայի պահանջների պաշտպանության օգտին։ Մենշևիկները գտնում էին, շեշտում է հեղինակը, որ ցարական իշխանությանը պետք է փոխարինի ոչ թե բանվոր դասակարգի և գյուղացիության դեմոկրատական դիկտատուրան, այլ՝ սոսկ բուրժուազիայի դիկտատուրան։

Չնայած սկսված պատերազմին և սոցիալ-շովինիստների դավաճանությանը, պրոլետարիատի դիտակից մասը շարունակեց պայքարն իր իրավունքների պաշտպանության համար։ Պատերազմը սկսվելուց անմիջապես հետո Անդրկովկասի բանվոր դասակարգը, հետևելով կենտրոնական Ռուսաստանի քաղաքների բանվորների օրինակին, իր բողոքի ձայնը բարձրացրեց թալանչիական պատերազմի դեմ։ Լայն մեկնաբանություններ տալով այս հարցերին, հեղինակը նշել է, որ 1915 թ. բանվորական շարժումը ոչ միայն չթուլացավ, այլ ավելի ուժեղացավ։ Վ. Ի. Լենինը 1915 թ. նոյեմբերին գրել է. «Այժմ մենք նորից գնում ենք դեպի հեղափոխություն։ Այդ բոլորն են տեսնում»2։

Բանվորական շարժման վերելքն Անդրկովկասում, որ ծավալվել էր 1915 թ. կեսերից, ավելի ուժեղացավ 1916 թ.։ 1917 թ. առաջին ամիսներին ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում շարունակվեցին բանվորական գործադուլները։

Հ. Պետրոսյանի աշխատությունն ավարտվում է այն ճիշտ եզրակացությամբ, որ Անդրկովկասի բաղմազգ պրոլետարիատի գործադուլային պայքարը ապացուցեց, որ երկրամասի բանվորների առաջավոր մասը գնում էր բոլշևիկների ետևից, իսկ մենշևիկները, էսէռները և այլ նրանգի սոցիալ-շովինիստները բանվոր դասակարգի, աշխատավոր մասսաների սոցիալական ազատագրության թշնամիներ էին։

Հ. Պետրոսյանի արժեքավոր այս մենագրությունը, սակայն, զերծ չէ որոշ թերություններից։ Այսպես, օրինակ, Վրաստանի և Ադրբեջանի սոցիալ-տնտեսական աշխույժ կյանքի և բանվորական շարժումների մասին տրված ընդարձակ շարադրանքի ֆոնի վրա շատ նվազ տպավորություն են թողնում Արևելյան Հայաստանին վերաբերող հատվածները։ Դա, իհարկե, այդպես էլ եղել է, սակայն հեղինակը պետք է վերապահումներ աներ և ընդգծված բացատրեր դրա պատճառները, մասնավորապես այն պայմանները, որի մեջ գտնվել է Արևելյան Հայաստանը։ Թվում է, տվեալ է հիշատակվեր Հայաստանի, իրոք տնտեսական հետամնացությունը, համաշխարհային պատերազմի տարիներին կազմակերպված հայերի ցեղասպանությունը և ընդհանրապես հայկական հարցի գոյությունը, որը շատ կենսական խնդիր էր ոչ միայն արևմտահայերի, այլև արևելահայերի համար։ Աշխատության մեջ կան նաև կրկնություններ. օրինակ, կանանց և անչափահաս երեխաների աշխատանքային օրվա սահմանափակման օրենքի վերացման մասին հիշատակվում են 92 և 249 էջերում։

Հիշված թերությունները, սակայն, բոլորովին չեն արժեքազրկում Հ. Պետրոսյանի խիստ ուշադրավ աշխատության գիտական, մենք կասեինք նաև՝ գիտաքաղաքական նշանակությունը։ Մենագրությունը շարադրված է դրաղետ լեզվով, կուռ տրամաբանությամբ, մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիական հիմքի վրա։ Ինչպես նշեցինք, նրանում սովետական պատմագրության մեջ առաջին անգամ ուսումնասիրված է Անդրկովկասի բանվոր դասակարգի և նրա ավանգարդի՝ բոլշևիկյան կազմակերպությունների՝ 1914—1917 թթ. պատմությունը։ Գիրքն այրի է ընկնում փաստառատությամբ, դիտական շրջանառության մեջ դրված նոր վավերագրերի ընդգրկումով և պրոբլեմի ամբողջական լուսաբանությամբ։

Ամփոփելով գրքի արժանիքների մասին մեր ասելիքը, չենք կարող չընդգծել գիտական մենագրության համար շատ կարևոր մի հանգամանք ևս. չնայած գրքում օգտագործված փաստական նյութին, հեղինակը դրա էմպիրիկ շարադրողը չէ. նա ավելի շատ փաստական նյութի դիտական մեկնաբանն է և այդ նյութը, գիտելիք հաղորդելու հետ միասին, այն հիմքն է, որի վրա հեղինակը կառուցել է եզրակացություններով ու հետևություններով հարուստ իր ասելիքը, իր քննարկումներն ու դրույթները։ Այս ամենը իրավունք է տալիս Հ. Պետրոսյանի մենագրությունը դասելու վերջին տասնամյակի պատմագիտական լավագույն աշխատությունների շարքը։

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
ԴԵՐԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 529։